

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-5-1-Ա

ք. Երևան

14.04.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի ապրիլի 14-ի նիստում քննարկեց 2022 թվականի մարտի 17-ին արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Չայնաթաուն» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Երևան 0001, Թումանյան 19/37, AM) «MADE IN CHINA» (No20211272) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ 3-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ ապրանքային նշանի հայտը ներկայացվել է հայկական «Չայնաթաուն» ՍՊ ընկերության կողմից, սակայն նիշում ներառված է «MADE IN CHINA» արտահայտությունը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայությունների աշխարհագրական ծագման հարցում: Հայտարկված նիշը բացառապես բաղկացած լինելով աշխարհագրական ծագում ցույց տվող ոճավորված տառատեսակով գրված բառային «MADE IN CHINA» (արտադրված է, պատրաստված է Չինաստանում) արտահայտությունից, 35-րդ դասի ծառայությունների համար հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ, ինչպես նաև խնդրարկված դասերի ծառայությունների համար սպառողներին կարող է մոլորության մեջ գցել թե՛

ծառայությունների աշխարհագրական ծագման և թե՛ բնույթի վերաբերյալ հարցերում, այն է՝ 35-րդ դասի խնդրարկված «ապրանքների ցուցադրում. մանրածախ վաճառքի նպատակով ապրանքների ցուցադրում բոլոր լրատվամիջոցներով. սննդի խանութներ. շարժական կամ ստացիոնար կրպակների, տաղավարների միջոցով սննդի առաջարկի և վաճառքի ծառայություններ. հացամթերքին վերաբերող մանրածախ առևտրի ծառայություններ» ծառայությունների համար նշում է ապրանքների ծագման վայրը, երկիրը, իսկ 43-րդ ծառայությունների համար շփոթեցնում ծառայություններ մատուցողի վերաբերյալ հարցում: Ինչ վերաբերում է «fast» և «casual» բառերին, ապա դրանք ենթակա չեն առանձին գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և Կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հանդիսանում են նկարագրական բնույթի նիշեր: Օրենքի 11-րդ, 13-րդ հոդվածների համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես ապրանքային նշաններ և բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 7-րդ կետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ ապրանքային նշանի հայտը ներկայացվել է հայկական «Չայնաթաուն» ՍՊ ընկերության կողմից, սակայն նիշում ներառված «MADE IN CHINA» արտահայտությունը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայությունների աշխարհագրական ծագման հարցում:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված «MADE IN CHINA» (No20211272) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ**

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ